

Վ. Սարոյան  
<<Գեղեցիկ սպիտակ ձիու ամառը>>

**Մուտք**

Յուրաքանչյուր ազգ ունի իր այն արվեստագետը, գրողը, բանաստեղծը, որը իր ստեղծագործությամբ ներկայացնում է իր ժողովրդի բնավորությունը:

Դրանցից է Վիլյամ Սարոյանը, որի ստեղծագործությունները հեռավոր Ամերիկայում հային օգնում էր հայ մնալ, պատմում հայի մասին, նրա ապրելաձևի ու բնավորության մասին:

<<Իմ անունը Արամ է>> գիրքը պատմում է այդ մասին: Ղարոլլանյանների ընտանիքի, նրանց պատվի ու արժանապատվության, մաքրության ու հպարտության ու մի քիչ <<խենթության>> մասին: Գրքի պատմվածքներից մեկն է <<Գեղեցիկ սպիտակ ձիու ամառը>>:

Տարիների հեռվից վերհուշի միջոցով Արամը պատմում է իր և իր զարմիկ Մուրադի հետ կատարված դեպքի մասին, երբ ինքը 9 տարեկան էր:

\* Այսօր մենք ունենք հյուրեր և ուզում ենք նրանց ցուց տալ, որ մենք կարող ենք արդար դատել, առանց կովելու բանավիճել և ասել մեր կարծիքը:

**Դասի նպատակը**

Աշակերտը պետք է կարողանա

1. պատմել ընդարձակ և համառոտ՝ զարգացնելով պատմողական ունակությունները
2. պատմելու ընթացքում առանձնացնել գլխավորը երկրորդականից, ընտրովի պատմել՝ տեքստից առանձնացնելով հանձնարարվածը
3. համադրել սյուժետային գծին գույգահեռ հարցերը, հեղինակի(հերոսի) մտորումները
4. գտնել սույն պատմվածքի տեղը <<Իմ անունն Արամ է>> ժողովածուում՝ մյուս պատմվածքների և <<Գեղեցիկ սպիտակ ձիու ամառը>>-ի
5. բանավիճել՝ ցուցաբերելով հանդուրժողականություն, արարքները ճիշտ գնահատելու ունակություն

**Կահավորումը**

1. Մահիկահանդես՝ նվիրված Վ. Սարոյանին
2. Պատմվածքի հիման վրա նկարած աշակերտների նկարներ
3. Պատի թերթ

**Դասի ընթացքը**

1. Վ. Սարոյանի կենսագրությունից (որդու անունը Արամ է, և նա գրող է: Նա Ղարոլլանյանների տոհմից է): Արամ անունը Սարոյանի համար ամենասիրելի հայկական անունն է:
2. Վ. Սարոյանը գրելու և գրականության մասին  
Ինձ ոչ ոք չէր խնդրում, որ գրեի: Պարզապես ես գոյություն ունեի, ապրում էի այս աշխարհում և ինձ համար գրելուց լավ զբաղմունք չէի տեսնում: Փորձել եմ ամենատարբեր զբաղմունքներ... ամենահարմարն ինձ համար գրելն է:

Երկար ժամանակ մտածում էի, թե գրողն Աստված է, երբ վերջապես հասա Գի դը Մոպասանին, հասկացա որ գրողը մարդ է: Նրա գրածն ինձ դուր եկավ և նույնիսկ այնպիսի զգացում առաջացավ, որ ես էլ մի գուցե կարողանամ գրել ճիշտ այնպես, ինչպես նա է կարողացել... Պատկերացում չունեի, թե ով է նա: Գիրքը բացեցի ու կարդացի մի պատմվածք՝ «Զանգր»... Դա կյանքումս առաջին պատմվածքն էր, որ իսկապես կարդացի, քանի որ կարդալ նշանակում է նաև գրել: Կարդալով այդ պատմվածքը՝ ես միաժամանակ գրեցի այն, որ գրածս ինձ դուր եկավ:

3. «Իմ անունը Արամ է» ժողովածուի մասին(1940թ.).

1945 թվականին Բոստոնում լույս տեսավ Սարոյանի «Անունս Արամ է» պատմվածքների ժողովածուի հայերեն թարգմանությունը: Այդ առիթով գրքի թարգմանիչը գրում է. «Իմ հատուկ խնդրանքի վրա էր, որ ձեռնարկեցի... այս հավաքածուի հայերեն թարգմանության. Սարոյանի ամենասիրած երկն է...»: Անդրադառնալով գրքի հեղինակին, նա գրում է. «... Օտար ափերուն վրա ծնած և սնած ըլլալով հանդերձ՝ Վիլյամ Սարոյանը ոչ միայն հայ մէ... հայ միր բովանդակ էությամբ՝ հպարտ իր ցեղին անցյալով և հավատավոր անոր ապագային վերաբերմամբ, այլ իր համակ գրականությունն օծուն է հայկական շունչով: Իր ներկայացուցած տիպերուն մեծ մասը հոգեբանական խորքով հայ են...»:

Ժողովածուի պատմվածքներում Սարոյանը պատկերել է պանդուխտ հայերի կյանքը : Ուշադրության կենտրոնում են Ղարօղլանյանների բազմանդամ ընտանիքի ներկայացուցիչները, և պատմվածքները մի ամբողջություն են դառնում գլխավոր հերոսի և պատմողի՝ Արամի շնորհիվ: Սարոյանը ներկայացրել է հայերի դժվարին կյանքը օտարության մեջ, նրանց բնորոշ մտածելակերպը, կենսասպիրությունը, տոկունությունը;

Պատմվածքի հերոսների աշխարհում տիրապետում է համատարած «խենթությունը», և ոչինչ չի համապատասխանում կենցաղի ու մարդկային հարաբերությունների մասին տարածված պատկերացումներին:

Ղարօղլանյանները «ամենազարմանալի և անհեթեթ աղքատության մեջ» են, բայց դրա փոխարեն նրանք պարծենում են, որ «հպարտ են, ազնիվ»:

Պատումի այս ձևը՝ վերհուշը, ներքին խոսքը, երկխոսությունները, լրացնելով մեկը մյուսին, հաստատում է պատմվածքի հիմնական միտքը. այդպիսի տոհմից, որը դարերով հայտնի է իր ազնվությամբ, չի կարող գող լինել:

«Գեղեցիկ սպիտակ ձիու ամառը» պատմվածքը

1. Պատմել առանց խախտելու դեպքերի հաջորդականությունը՝ բաժանելով մասերի
 

ա) «Գողություն»	գ) «Հանդիպում»
բ) «Երազանքի ձին»	դ) «Վերադարձ»
2. Բնութագրել Արամին և Մուրադին
  - ազնիվ տոհմի ժառանգներ
  - երազանքին ձգտող, խելամիտ
  - արժանապատվության և պարտքի զգացում
  - հպարտություն, հանդուգն
  - գող և ստախոս չէին, անչափահաս էին
  - արկածների սիրահար

3. Կարդալ և դուրս գրել Ղարօղլանյանների տոհմը բնութագրող հատվածները I, II և III դեմքով, կարծիքներ, խոհեր՝ դրանով բացահայտելով օտար աշխարհում մարդկային հատկանիշները չկորցրած, հայկականը պահպանած մարդկանց հոգին:
4. Պատմվածքը հենվում է երազի և իրականության հիման վրա: Երազը կյանքն է՝ լի հրաշալիքներով, հաճելի ու խորհրդավոր երազներով, ձիերի հետ կապված հիշողություններով և տենչերով, իսկ իրականությունը այն է, որ աղքատ են ու հպարտ, ազնիվ:
5. Բացատրել նախադասությունների միտքը և վերնագիրը
  - Կասկածոտ մի մարդ ավելի շուտ իր աչքերին կհավատար, քան սրտին:
  - Իմ զարմիկ Մուրադը, որին խելառ էին համարում բոլորը:
6. Ներկայացնել մտորումները
  - ա)երբ Արամը տեսնում է զարմիկ Մուրադին, սպիտակ ձին:
  - բ)երբ Արամը փորձում է իրեն համոզել, թե իր զարմիկի արածը գողություն չէ:
  - գ)ձիուց բաժանվելու պահը
7. Դատել Արամին և Մուրադին
  - հողված
8. Եզրակացություն
 

Դա ամառ էր, տարվա եղանակ, անմոռանալի ամառ, երբ մեկ անգամ ևս ստուգվեց տոհմի ազնվության ժառանգականությունը: Երեխայի աչքերով վերլուծվեց երեխայի արարքը:
9. Հարցեր
  1. Համաձայն էս Խոսրով քեռու կարծիքին:
  2. Դու ի՞նչ կպատասխանեիր Ջոն Բայրոնին:
  3. Դու սրտի՞ն կհավատաս, թե՞ աչքերին:
  4. Դու ճի՞շտ ես համարում, որ ձին վերադարձնում են:
  5. Դու հակասությո՞ւն չես տեսնում Արամի և Մուրադի խոսքերում:
10. Տնային աշխատանք-Գտնել առնչություններ
  - Վ. Թոթովենց <<Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա>>
  - Անտուան դը սենտ Էքզյուպերի <<Փոքրիկ իշխանը>>